7) Վարկավորման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու և առևտրային վարկերի գծով վարկային ռիսկերը նվազեցնելու նպատակով վարկային մասնագետների կողմից իրականացվում է վարկառուի ֆինանսական գործունեության մանրամասն վերլուծություն: Վերլուծության նպատակով վարկի տրամադրման ստորաբաժանումների մասնագետները այցելում են հաճախորդի գործունեության վայր, վերլուծության համար օգտվելով ինչպես առկա հաշվետու փաստաթղթերից, այնպես էլ կազմելով հաշվեկշռի, եկամուտ-ծախսերի, դրամական հոսքերի, կապիտալի շարժի սեփական տարբերակները:

Բանկի մասնագետի կողմից կազմած հաշվեկշիռը արտացոլում է իրավիճակը վերլուծության պահին՝ իրացվելի ակտիվներ /կանխիկ միջոցներ դրամարկղում, բանկային հաշիվներ, խնայողություններ/, դեբիտորական պարտքեր /ստացվելիք գումարներ, ապրանքներ ճանապարհին, կատարված կանխավճարներ/, ապրանքանյութական պաշարներ /հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ, ապրանքներ/, հիմնական միջոցներ /հաճախորդի գործունեության հետ կապված սարքավորումներ, ավտոմեքենաներ, անշարժ գույք և այլ գույք/:

Եկամուտ - ծախսերի հաշվետվությունը կազմվում է հաշվի առնելով հաճախորդի միջին ցուցանիշները՝ իրացում /միջինացված տվյալներ/, ապրանքի կամ ծառայությունների արժեք /հումքի, նյութերի ծախս, ապրանքների ինքնարժեք/, վերադիր ծախսեր /աշխատավարձ, վարձավճար, տրանսպորտային ծախսեր, կոմունալ ծախսեր, հարկեր և այլն/, այլ եկամուտներ, այլ ծախսեր, տրամդրվելիք վարկի և տոկոսների մարումներ:

Վերլուծության ժամանակ հաշվարկվում են հաճախորդի ֆինանսական վիճակը բնութագրող այնպիսի տնտեսական ցուցանիշներն ու գործակիցները, ինչպիսիք են կապիտալի համարժեքության գործակից, իրացվելիության գործակից, շրջանառելիության գործակից, վերադիր, համախառն մարժա, մաքուր մարժա, իրացման ծավալների թույլատրելի իջեցման սահման, լրացուցիչ հաշվարկվում է նաև վարկի սպասարկման գործակից:

Վարկի գումարը տրամադրվում է միայն վարկառուի ֆինանսական վիճակը նշված ցուցանիշների համար սահմանված բանկի պահանջներին բավարարելու դեպքում, որոնք ամրագրված են վարկավորման գործընթացը սահմանող ներքին իրավական ակտերով:

Վարկավորման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պարբերաբար իրականացվում է տրամադրված վարկերի մոնիտորինգ: Մոնիտորինգը իրականացվում է բանկի հատուկ ստորաբաժանման՝ վարկերի մոնիտորինգի բաժնի կողմից: Վարկերի ընթացիկ մոնիտորինգը անհրաժեշտության դեպքում իրականացվում է վարկային մասնագետների կողմից:

Կիրառվում է մոնիտորինգի երկու տեսակ՝

1. Փաստացի այցելությունների միջոցով մոնիտորինգ:

2. Հեռախոսային մոնիտորինգ:

Մոնիտորինգի ընթացքում բաժնի մասնագետների կողմից պարզաբանվում են հետևյալ խնդիրները.՝

2. Տեղեկատվություն վարկառուի շուկայում դիրքի փոփոխության վերաբերյալ (մրցակիցներ, գնային տատանումներ, իրացում և այլն):

3. Ըստ փուլերի տրամադրվող վարկերի, ինչպես նաև գործող վարկերի առկայության դեպքում, նախքան հերթական փուլի կամ նոր վարկի տրամադրումը, իրականացվում է նախկինում տրված վարկի մոնիտորինգ (վերլուծություն):

4. Փոփոխություններ կապված մատակարարների, սպառողների կազմի, հումքի գների հետ:

5. Վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող այլ ցուցանիշներ:

Մոնիտորինգի ընթացքում վարկի ոչ նպատակային օգտագործման կամ վարկառուի կողմից բանկին ոչ ստույգ տեղեկատվություն ներկայացման դեպքերի բացահայտման ժամանակ փուլերով տրամադրվող վարկերի դեպքում կարող է դադարեցվել հետագա վարկավորումը կամ կարող է դադարեցվել վարկային պայմանագրի գործողությունը և իրականացվել վարկի, առևտրային նպատակով տրամադրված վարկային գծի և հաշվարկված տոկոսագումարների վաղաժամկետ մարում՝ հիմք ընդունելով գրավի պայմանագրով վերապահված իրավունքները:

Գրավի գնահատումը իրականացվում է գնահատման թույլտվություն ունեցող մասնագիտացված անկախ գնահատող կազմակերպությունների կողմից: Գույքերի գնահատումը արտացոլում է շուկայում առկա իրավիճակը՝ հաշվի առնելով գույքերի գների կանխատեսումը:

Հաճախորդների հետ կնքվող վարկային և գրավի պայմանագրերում առկա է դրույթ գույքերի պարտադիր ապահովագրության վերաբերյալ:

Դուրս գրված վարկերի հավաքագրումը իրականացվում է վարկավորման և միջոցների ներգրավման վարչության խնդրահարույց վարկերի բաժնի և անվտանգության վարչության կողմից համատեղ:

8) «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ում վարկավորման գործընթացը ներառում է վարկային ռիսկերը հայտնաբերելու համար համապատասխան բոլոր ազդակները:

Վարկային ռիսկի կառավարումը Բանկում կատարվում է հետևյալ հիմնական ընթացակարգերով՝

1. Վարկավորվող օբյեկտի խելամիտ բացահայտման գործընթաց,
2. Վարկային փաստաթղթերի ստանդարտ փաթեթի հավաքագրում,
3. Վարկերի մոնիտորինգ,
4. Պրոբլեմային վարկերի մարման գործընթաց:

Վերոնշյալ գործընթացների արդյունքում բացահայտվում և գնահատվում է փոխառուի իրավունակությունը, վարկի նպատակը, փոխառուի վարկունակությունը և վարկի մարման աղբյուրները, փոխառուի հետ կապված անձանց գծով առկա ռիսկերի բացահայտում, փոխառուի վարկային պատմությունը, ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու փորձառությունը, դիրքը շուկայում, գրավի առարկայի համապատասխանությունը:

Վերոնշյալ գործընթացների արդյունավետության բարձրացմանը նպաստում է նաև այն, որ բանկի կողմից վարկավորվող հաճախորդների գործունեությունը շատ դեպքերում փոխկապակցված է և բանկը հնարավորություն է ունենում ստուգելու հաճախորդի կողմից ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը նրա հետ առնչվող /մատակարար, գնորդ կամ մրցակից հանդիսացող/ հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվության հետ համեմատելու միջոցով:

Ցուցանիշ	Գումար	Ցուցանիշ	Գումար	Հարաբերություն
<b>31.12.14թ</b>				
Չաշխատող վարկեր	791,284	Ընդհանուր վարկեր	52,057,388	1.5%
<b>30.09.15թ</b>				
Չաշխատող վարկեր	1,729,432	Ընդհանուր վարկեր	54,431,420	3.2%
<b>31.12.14թ</b>				
Չաշխատող վարկերի պահուստ	157,180	Ընդհանուր կապիտալ	11,071,015	1.4%
<b>30.09.15թ</b>				
Չաշխատող վարկերի պահուստ	333,907	Ընդհանուր կապիտալ	10,904,273	3.1%
<b>31.12.14թ</b>				
Վարկերի գծով պահուստաֆոնդ	736,559	Ընդհանուր վարկեր	52,057,388	1.4%
<b>30.09.15թ</b>				
Վարկերի գծով պահուստաֆոնդ	929,200	Ընդհանուր վարկեր	54,431,420	1.7%
<b>31.12.14թ</b>				
Հնարավոր կորուստների պահուստ	735,009	Չաշխատող վարկեր	791,284	92.9%
<b>30.09.15թ</b>				
Հնարավոր կորուստների պահուստ	929,200	Չաշխատող վարկեր	1,729,432	53.7%
<b>31.12.14թ</b>				
Դուրս գրումներ - Փոխհատուցումներ	-14,736	Միջին ընդհանուր վարկեր	45,199,915	0.0%
<b>30.09.15թ</b>				



Գուրս գրումներ - Փոխհատուցումներ	-91,302	Միջին ընդհանուր վարկեր	45,326,822	-0.2%
31.12.14թ				
Փոխհատուցումներ	103,929	վարկերից կորուստ	- 14,736	-705.3%
30.09.15թ				
Փոխհատուցումներ	135,856	վարկերից կորուստ	- 91,302	-148.8%
31.12.14թ				
Շահույթի ծածկման գործակից = (զուտ գործառնական եկամուտներ + պահուստի ստեղծման ծախսեր)	1,152,089	Վարկերից զուտ կորուստ	-14,736	-7818.2%
30.09.15թ				
Շահույթի ծածկման գործակից = (զուտ գործառնական եկամուտներ + պահուստի ստեղծման ծախսեր)	480,651	Վարկերից զուտ կորուստ	-91,302	-526.4%
31.12.14թ				
Վարկային ռիսկով ճշգրտված զուտ տոկոսային մարժա = (տոկոսային եկամուտ-տոկոսային ծախսեր- վարկերի գծով կորուստ)	4,253,290	Վարկային ներդրումներ	52,057,388	8.2%
30.09.15թ				
Վարկային ռիսկով ճշգրտված զուտ տոկոսային մարժա = (տոկոսային եկամուտ-տոկոսային ծախսեր- վարկերի գծով կորուստ)	3,133,342	Վարկային ներդրումներ	54,431,420	5.8%
31.12.14թ				
Խոշոր փոխառություններ	16,405,341	Կապիտալ	11,071,015	148.2%
30.09.15թ				
Խոշոր փոխառություններ	19,456,497	Կապիտալ	10,904,273	178.4%

## Շուկայական ռիսկ

### 1) շուկայական ռիսկի բանկի սեփական սահմանումը

*Շուկայական ռիսկը* արտարժույթային, տոկոսադրույթի և գնային ռիսկն է, որը հետևանք է համապատասխանաբար՝ փոխարժեքի, տոկոսադրույթների և կապիտալի գործիքների գների տատանման:

### 2) շուկայական ռիսկի չափման և գնահատման մեթոդները

#### Արտարժույթի ռիսկ

##### Արտարժույթային ռիսկի և դիրքերի կառավարման արդյունավետության

Արտարժույթային ռիսկի գնահատման VAR մոդելի հաշվարկներն իրականացվում են օրական կտրվածքով, որոնց համար հիմք են հանդիսանում արտարժույթների փոխարժեքների նախորդ ժամանակահատվածի տվյալների ժամանակային շարքերը և արտարժույթային դիրքերի վերաբերյալ տվյալները: Որպես առանձին արտարժույթային դիրքի գծով ռիսկի բնութագրիչ դիտվում է առաջիկա մեկ (տաս) օրվա համար փոխարժեքների տատանման հետևանքով վերագնահատման վնասի հնարավոր առավելագույն մեծությունը տրված հուսալիության մակարդակի պայմաններում: Մոդելի հաշվարկներն իրականացվել են 99% հուսալիության մակարդակի պայմաններում: Մոդելի շրջանակներում հաշվարկվում է արտարժույթների փոխարժեքների տատանումների կոռելյացիոն մատրիցը, որի հիման վրա իրականացվում է արտարժույթային դիրքերից առաջացող հնարավոր առավելագույն ընդհանուր վնասի (արտարժույթային ակտիվների և պարտավորությունների փաթեթի ռիսկի) գնահատում:

Հաշվետու եռամսյակի արդյունքներով միջին օրական հնարավոր առավելագույն վնասն (արտարժույթային ռիսկը) ըստ առանձին արտարժույթային դիրքերի և արտարժույթային ակտիվների և պարտավորությունների փաթեթի, 99% հուսալիության պայմաններում կազմել է.

Հաշվետու ժամանակաշրջան	Հազ									
	USD	GBP	EUR	CHF	CNY	AED	RUB	GEL	XAU	Համախա
2014թ. III եռ.	474.79	59.82	176.60	222.57	98.19	262.99	586.57	122.16	8.50	1,132.43
2015թ. III եռ.	5,319.99	645.34	258.54	897.70	0.00	1,446.54	1,531.40	323.61	8.20	8,132.55
աճ/նվազում	4,845.20	585.52	81.94	675.13	-98.19	1,183.55	944.83	201.45	-0.30	7,000.12

Ներկայացվում է բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

30.09.2015

Հազ դրամ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ Կենտրոնական բանկում	10,464,982	12,515,021	652,740	23,632,743
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ	443	207	-	650
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ	2,954,667	5,114,693	350,193	8,419,553
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ				-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	26,111,059	28,320,361		54,431,420
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվներ	253,462			253,462
Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում				-
Հետգնման պայմանագրով գրավադրված արժեթղթեր	7,946,059			7,946,059
Այլ ակտիվներ	13,753	10,850	2	24,605
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>47,744,425</b>	<b>45,961,132</b>	<b>1,002,935</b>	<b>94,708,492</b>
<b>Պարտավորություններ</b>				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	16,612,465	9,741,443	237,275	26,591,183
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	20,634,854	34,672,878	506,991	55,814,723
Ստորադաս փոխառություն	4,388,795			4,388,795
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական պարտավորություն	10,367	-		10,367
Ընթացիկ հարկի զծով պարտավորություն				-
Վճարվելիք գումարներ	73,874			73,874
Հետաձգված հարկային պարտավորություն				-
Այլ պարտավորություններ	1,697,698	37,432	2,787	1,737,917
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>43,418,053</b>	<b>44,451,753</b>	<b>747,053</b>	<b>84,228,064</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>4,326,372</b>	<b>1,509,379</b>	<b>255,882</b>	<b>6,091,633</b>

31.12.2014

Հազ դրամ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ Կենտրոնական բանկում	10,929,663	9,094,462	575,893	20,600,018
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ	443	8,382	-	8,825
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ	1,642,645	5,751,538	763,630	8,157,813
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	54,263	-	-	54,263
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	29,150,426	22,944,267	-	52,094,693
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվներ	49,478	-	-	49,478
Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում	227,439	-	-	227,439
Հետզման պայմանագրով գրավադրված արժեթղթեր	6,118,812	-	-	6,118,812
Այլ ակտիվներ	19,949	14,744	18	34,711
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>48,193,118</b>	<b>37,813,393</b>	<b>1,339,541</b>	<b>87,346,052</b>
<b>Պարտավորություններ</b>				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	14,123,061	8,143,012	44,590	22,310,663
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24,639,929	32,388,828	500,175	57,528,932
Առևտրային նպատակով պահվող պարտավորություն	19,659	-	-	19,659
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	116,061	-	-	116,061
Վճարվելիք գումարներ	52,781	-	-	52,781
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-
Այլ պարտավորություններ	645,451	44,412	126,189	816,052
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>39,596,942</b>	<b>40,576,252</b>	<b>670,954</b>	<b>80,844,148</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>8,596,176</b>	<b>(2,762,859)</b>	<b>668,587</b>	<b>6,501,904</b>

\* «I խմբի արտարժույթի» կազմը հետևյալն է. ԱՄՆ դոլար, Անգլիական ֆունտ ստեռլինգ, Եվրո, Շվեյցարական ֆրանկ, Ռսկու ստանդարտացված ձուլակտոր և Մետաղական հաշիվ

\*\* «II խմբի արտարժույթի» կազմը հետևյալն է. ՌԴ ռուբլի, Վրացական լարի, Չինական յուան, ՄԱԷ դիրխամ:

### **Տոկոսադրույքի ռիսկ**

#### **Տոկոսադրույքի փոփոխման ռիսկի գնահատում:**

Գիսբալանսի վերլուծությունը ցույց է տալիս, որ բանկի 2015թ. III եռամսյակի միջին կուտակային դիսբալանսը (տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների կուտակային ճեղքվածքը) դրական է՝ 1,401,952.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1,025,289.0 հազ. դրամի դիմաց՝ բացարձակ արժեքով աճելով 376,663.0 հազ. դրամով կամ 36.7%-ով, այսինքն՝ բանկը միջին հաշվով 2015թ. III եռամսյակում զգայուն է եղել ըստ ակտիվների: Միջին կուտակային դիսբալանսը 2015թ. III եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, բացարձակ արժեքով նվազել է 77,526.0 հազ. դրամով կամ 5.2%-ով:

Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության միջին գործակիցը 2015թ. III եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 102.1%՝ 2014թ. III եռամսյակի 101.8% միջին արժեքի դիմաց, այսինքն 2015թ. III եռամսյակում միջին հաշվով տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվները կազմել են տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն պարտավորությունների 102.1%-ը:

Ակտիվների դյուրացիան 2015թ. III եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 1.199 տարի (2014թ.-ի III եռամսյակի վերջի 1.207 տարվա դիմաց)՝ նվազելով 0.008 տարով կամ 0.7%-ով: Նախորդ եռամսյակի վերջի համեմատ (1.142 տարի) նշված ցուցանիշն աճել է 0.057 տարով կամ 5.0%-ով:

Պարտավորությունների դյուրացիան 2015թ. III եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 0.488 տարի (2014թ.-ի III եռամսյակի վերջի 0.420 տարվա դիմաց)՝ աճելով 0.068 տարով կամ 16.2%-ով: Նախորդ եռամսյակի վերջի համեմատ (0.470) նշված ցուցանիշն աճել է 0.018 տարով կամ 3.8%-ով:

Դյուրացիայի ճեղքվածքը 2015թ. III եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 0.735 (2014թ.-ի III եռամսյակի վերջի 0.824-ի դիմաց)՝ նվազելով 0.089-ով կամ 10.8%-ով: Նախորդ եռամսյակի վերջի համեմատ (0.698) նշված ցուցանիշն աճել է 0.037-ով կամ 5.3%-ով:

Փոփոխվող տոկոսադրույթով ակտիվներ և պարտավորություններ  
30.09.2015թ

Հազ դրամ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով
Տեղաբաշխված միջոցներ												
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ												
<b>Ընդամենը</b>	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ներգրավված միջոցներ												
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝												
- վարկեր				2,142,219		743,303		114,292		228,585		
<b>Ընդամենը</b>	-	-	-	<b>2,142,219</b>	-	<b>743,303</b>	-	<b>114,292</b>	-	<b>228,585</b>	-	-
<b>Զուտ դիրք</b>	-	-	-	<b>(2,142,219)</b>	-	<b>(743,303)</b>	-	<b>-114,292</b>	-	<b>(228,585)</b>	-	-

31.12.2014թ

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով	Դրամով	Արտարժույթով
Տեղաբաշխված միջոցներ												
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝												
<b>Ընդամենը</b>	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ներգրավված միջոցներ												
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝												
- վարկեր				1,773,711		1,928,705		243,763				
<b>Ընդամենը</b>	-	-	-	<b>1,773,711</b>	-	<b>1,928,705</b>	-	<b>243,763</b>	-	-	-	-
<b>Զուտ դիրք</b>	-	-	-	<b>(1,773,711)</b>	-	<b>(1,928,705)</b>	-	<b>-243,763</b>	-	-	-	-

Ներկայացվում է հաշվետու և նախորդ ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքները.

Հոդվածի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ 30.09.2015թ.		Նախորդ ժամանակաշրջանի տոկոսադրույքներ 31.12.2014թ.	
	Դրամ	Արտարժույթ	Դրամ	Արտարժույթ
<b>Ակտիվներ</b>				
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում			-	-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում`	12.58	1.75	24.54	4.69
- միջբանկային վարկեր	0.00	1.75	0.00	4.69
- միջբանկային ռեպո	12.47	0.00	26.70	0.00
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	18.85	12.80	20.45	12.80
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր	14.33		14.33	
<b>Պարտավորություններ</b>				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	10.81	6.75	17.60	5.53
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	5.83	4.46	4.12	4.69

### 3) մողելների նկարագրությունը

#### Արտարժույթային ռիսկ

**Արտարժույթային ռիսկը** արտարժույթի փոխարժեքի տատանման հետևանքով վերագնահատումից հնարավոր առավելագույն վնասն է, որը գնահատվում է ինչպես ըստ առանձին արտարժույթների, այնպես էլ բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների ողջ փաթեթի (այսուհետ՝ փաթեթ) համար:

Արտարժույթային ռիսկի չափման և գնահատման համար կիրառվում է միջազգային պրակտիկայում ընդունված VAR (Value at Risk) մեթոդը (մողելը), որի միջոցով հաշվարկվում է ինչպես առանձին արտարժույթի տեսակների (արտարժույթային դիրքերի), այնպես էլ ամբողջ փաթեթի համար հնարավոր առավելագույն վնասի չափը (տրված հուսալիությանմբ): Համաձայն VAR մեթոդի հնարավոր առավելագույն վնասի չափը հաշվարկվում է արտարժույթային բաց դիրքերի և փոխարժեքների տատանումը բնութագրող ժամանակային շարքերի հիման վրա: Բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների համար հաշվարկված մեկօրյա VAR-երի հիման վրա գնահատվում են 10-օրյա VAR-երի արժեքները՝ առանձին արտարժույթների և ընդհանուր փաթեթի համար:

Հնարավոր առավելագույն վնասի հաշվարկը հնարավորություն է տալիս բանկին գնահատել իր արտարժույթային գործունեության արդյունավետությունը՝ հաշվի առնելով կորուստ կրելու ռիսկին ենթարկվածության աստիճանը, կառավարել արտարժույթային դիրքերը՝ ելնելով հնարավոր առավելագույն կորուստների չափից, անհրաժեշտության դեպքում սահմանափակելով արտարժույթային դիրքերի ծավալները:

Բանկի արտարժույթային քաղաքականությունը միտված է արտարժույթային դիրքերի արդյունավետ կառավարման ապահովմանը՝ զուգակցելով այն արդարացված ռիսկի մակարդակի հետ, իսկ նորմատիվների հաշվարկման ժամանակ հաշվարկվում է արտարժույթային ռիսկի հաշվարկման ստանդարտ մեթոդաբանության համաձայն :

#### Տոկոսադրույթի ռիսկ

**Տոկոսադրույթի ռիսկը** շուկայական տոկոսադրույթների փոփոխման բացասական ազդեցության հնարավորությունն է բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա:

Տոկոսադրույթի ռիսկի գնահատումն իրականացվում է «Տոկոսադրույթի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մողելի» («GAP մողել») և «Դյուրացիայի մողելի» կիրառմամբ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել տոկոսադրույթի փոփոխության ազդեցությունը բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի տնտեսական արժեքի վրա:

GAP ցուցանիշը (ճեղքվածքը) հաշվարկվում է որպես տոկոսադրույթի փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների տարբերություն: Հաշվարկներն իրականացվում են յուրաքանչյուր ամիս՝ առաջիկա 3 ամիսների ընթացքում զուտ տոկոսային եկամտի վրա տոկոսադրույթի փոփոխության ազդեցության գնահատման համար:

Սույն մողելի շրջանակներում կատարվում են հետևյալ ենթադրությունները.

1. դիտարկվող ժամանակահատվածում ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը և ծավալները մնում են անփոփոխ, այսինքն՝ մարված ակտիվները և պարտավորությունները կրկին տեղաբաշխվում և ներգրավվում են, բայց արդեն նոր գործող տոկոսադրույթներով,
2. տոկոսադրույթների վերանայումը կատարվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանի միջնակետում,
3. տարբեր մարման ժամկետայնությամբ բոլոր ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույթները փոփոխվում են միևնույն չափով, այսինքն՝ տեղի է ունենում ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության կորերի զուգահեռ տեղաշարժ:

Բանկի զգայունությունը տոկոսադրույթի նկատմամբ գնահատվում է «ճեղքվածքի հարաբերակցություն» ցուցանիշի միջոցով (GAP/ASSETS), որը հաշվարկվում է ակտիվների և պարտավորությունների կունուլյատիվ ճեղքվածքը հարաբերելով ակտիվներին:

Դյուրացիայի մողելի դեպքում գնահատվում է տոկոսադրույթի փոփոխության ազդեցությունը կապիտալի տնտեսական արժեքի վրա հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:



Այս մոդելի շրջանակներում նախ հաշվարկվում են բանկի ակտիվների և պարտավորությունների պորտֆելների դյուրացիաները (միջին կշռված ժամկետայնությունները), այնուհետև, վերջիններիս հիման վրա՝ կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը, որն իրենից ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների (ապագա հոսքերի) ներկա արժեքների փոփոխությունների (պայմանավորված տոկոսադրույքի տատանմամբ) տարբերությունը: Կապիտալի տնտեսական արժեքի փոփոխության գնահատման համար հաշվարկվում է դյուրացիայի ճեղքվածքը,

որն արտացոլում է բանկի ակտիվների և պարտավորությունների դյուրացիաների անհամապատասխանության աստիճանը, այսինքն՝ ակտիվների և պարտավորությունների ապագա հոսքերի միջին կշռված ժամկետայնությունների անհամապատասխանությունը: Դյուրացիայի ճեղքվածքի մեծ արժեքը վկայում է տոկոսադրույքների ռիսկի մակարդակի բարձր լինելու մասին: Դյուրացիայի ճեղքվածքի ցածր մակարդակի պահպանումը, այսինքն՝ ակտիվների և պարտավորությունների դյուրացիաների միմյանց մոտ արժեքների ապահովումը, հանգեցնում է տոկոսադրույքի ռիսկի հեջավորման (կապիտալի տնտեսական արժեքի՝ տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ կայունության):

Մշտապես ուսումնասիրվում են փոփոխուն տոկոսադրույքների տատանումները և դինամիկան, գնահատվում է դրանց հավանական փոփոխությունների ազդեցությունը բանկի փոփոխուն տոկոսադրույքով ակտիվների և պարտավորությունների վրա:

Տոկոսադրույքի ռիսկի նվազեցման նպատակով ապահովվում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների կուտակային ճեղքվածքի (կուտակային դիսբալանսի) և դյուրացիայի ճեղքվածքի պահպանումը ռիսկի ընդունելի սահմաններում: Հաշվի առնելով տոկոսադրույքների փոփոխման ընդհանուր միտվածությունը և կիրառելով մշակված մոդելները՝ միջոցառումներ են ձեռնարկվում ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալային և ժամկետային արդյունավետ հարաբերակցությունների ապահովման ուղղությամբ:

## Գնային ռիսկ

**Գնային ռիսկը** որևէ բորսայում (ներում) ցուցակված, բանկի հաշվեկշռում շուկայական ընթացիկ գներով արտացոլվող կապիտալի գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով Բանկի կողմից ֆինանսական կորուստներ կրելու վտանգն է՝ պայմանավորված ինչպես տվյալ կապիտալի գործիքի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող կապիտալի գործիքների շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով (տվյալ կապիտալի գործիքի գծով երկար կամ կարճ դիրքի առկայության պայմաններում):

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

V ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում,

V հնարավոր կորուստների գնահատում,

V հեջավորման գործիքների կիրառում,

V ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ կապիտալի գործիքներով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,

V կապիտալի գործիքների փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

### **Իրացվելիության ռիսկ**

#### **1) իրացվելիության ռիսկի բանկի սեփական սահմանումը**

Իրացվելիությունը բանկի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարման հնարավորությունն է:

**Իրացվելիության ռիսկը** հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա:

## 2) իրացվելիության ռիսկի չափման և գնահատման մոդելների նկարագրությունը

Իրացվելիության ռիսկի գնահատման համար կիրառվում են՝ *սթրես թեստերի մեթոդը*, որը ենթադրում է դիտարկվող տարբեր շոկային սցենարների տեղի ունենալու դեպքում բանկի իրացվելիության նորմատիվների խախտման հնարավորության բացահայտում և դրանց չափերի հաշվարկ և *ժամկետայնության ճեղքվածքների մեթոդը*, որը ենթադրում է իրացվելիության ցուցանիշների հաշվարկ, որոնց միջոցով իրականացվում է նաև իրացվելիության կառավարման որակի գնահատում:

Սթրես թեստերը կիրառելիս դիտարկվում են տվյալ ռիսկին վերաբերող մի շարք սցենարներ: Յուրաքանչյուր սցենարի դեպքում համապատասխան մեթոդով հաշվարկվում են բանկի նորմատիվների խախտման չափերը:

Իրացվելիության ռիսկի գնահատման նպատակով օգտագործվում են հետևյալ շոկային սցենարները.

1. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջում,
2. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդների 25%-ի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջում,
3. Բոլոր ցպահանջ պարտավորությունների 25%-ի ետ պահանջում,
4. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի պայմանագրի ժամկետից շուտ և բոլոր ցպահանջ պարտավորությունների 25%-ի միաժամանակ ետ պահանջում,
5. Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների X%-ի ժամկետից շուտ և բոլոր ցպահանջ պարտավորությունների Y%-ի ետ պահանջում (ընդ որում դիտարկվում են սցենարի երեք մակարդակ՝ մեղմ, միջին և խիստ, որոնք իրենցից ներկայացնում են ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների (ժամկետից շուտ) և բոլոր ցպահանջ պարտավորությունների համապատասխանաբար 10, 15 և 20 տոկոսի միաժամանակ ետ պահանջման իրավիճակները):

Բացահայտվում է նշված իրավիճակների հանդես գալու պայմաններում իրացվելիության Ն21 և Ն22 նորմատիվների խախտման հնարավորությունը և հաշվարկվում են դրանց խախտման չափերը: Նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկումը հնարավորություն է տալիս ստանալ բանկի իրացվելիության ռիսկի հստակ գնահատականներ՝ վերլուծելով ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների ետ պահանջման ազդեցությունը նորմատիվների վրա և գնահատելով վերջիններիս խախտման հավանականությունը:

Իրացվելիության ռիսկի գնահատման ժամկետայնության ճեղքվածքների մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել և վերլուծել բանկի իրացվելիության ռիսկը, ինչպես նաև բանկի կողմից վարվող քաղաքականությունը իրացվելիության բավարար մակարդակը պահպանելու համար: Այդ նպատակով բացահայտվում են բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքները, հաշվարկվում են իրացվելիության ցուցանիշները և գնահատվում է բանկի իրացվելիության կառավարման որակը: Իրացվելիության գնահատման սույն մեթոդաբանությունում կատարվում է ակնթարթային, մինչև 90 օր կուտակային և ընդհանուր (մինչև մեկ տարի կուտակային) իրացվելիությունների տարանջատում, ինչպես նաև դիտարկվում են իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերը բանկի իրացվելիության կառավարման որակի գնահատման համար:

## 3) իրացվելիության ռիսկի թուլատրելի նակարդակի որոշումը՝ ռիսկի քանակական վերլուծություն և ռիսկի քանակական գնահատական

Իրացվելիության ռիսկի գնահատում:

2015թ III եռամսյակի ընթացքում ակնթարթային իրացվելիության և ընդհանուր (մինչև 1 տարի կուտակային) իրացվելիության ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 18.41 և 5.63 տոկոսային կետով, իսկ մինչև 90 օր կուտակային իրացվելիության ցուցանիշը՝ աճել 9.43 տոկոսային կետով:

Հոդվածի անվանումը	Չափաատող		Մարմանը մնացել է						Անժամկետ	Ընդամենը
	Ժամկետային	Ժամկետանց	Ցպահանջ	մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 12 ամիս	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի		
Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ										
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում			23,362,743	-	-	-	-	-	270,000	23,632,743
Թանկարժե մետաղների ստանդարտացված ծուլակտորներ			650							650
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ			2,464,214	3,471,738	-	2,368,622	-	-	114,978	8,419,552
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ										-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ	928,378	111,012	-	9,611,224	5,253,090	5,466,227	27,169,522	5,891,967	-	54,431,420
Արժեթղթեր, այդ թվում				7,946,058	-	-	-	-	253,462	8,199,520
- առևտրային նպատակով պահվող										-
- վաճառքի համար մատչելի			-						253,462	253,462
- մինչև մարման ժամկետը պահվող										-
- ռեպո համաձայնագրով վաճառված			-	7,946,058						7,946,058
Այլ պահանջներ	-	-	248	24,357	-	-	-	-	-	24,605
Պայմանագրային պահանջներ**										-
<b>Ընդամենը</b>	<b>928,378</b>	<b>111,012</b>	<b>25,827,855</b>	<b>21,053,377</b>	<b>5,253,090</b>	<b>7,834,849</b>	<b>27,169,522</b>	<b>5,891,967</b>	<b>638,440</b>	<b>94,708,490</b>
Այդ թվում										
I խմբի արտարժույթով	490,240	53,019	14,713,238	5,340,651	2,715,300	4,625,596	13,888,128	4,019,982	114,978	45,961,132
II խմբի արտարժույթով	-	-	859,099	143,834	-	-	-	-	-	1,002,933
Այդ թվում										
Փոփոխվող տոկոսադրույքներով										-
Ֆիքսված տոկոսադրույքներով	928,378	111,012	560,439	18,596,765	5,244,753	7,818,325	27,070,786	5,891,967	-	66,222,425
Անտոկոս			25,267,421	2,456,612	8,337	16,524	98,719	-	638,440	28,486,053
<b>Պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	-	-	1,200,488	13,106,715	3,359,728	4,705,907	3,955,511	262,324	510	26,591,183
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում	-	-	28,102,465	7,870,418	5,756,973	11,111,849	2,821,256	150,555	1,205	55,814,721
- ցպահանջ ավանդներ	-	-	27,391,055	31,199	-	-	21,055	-	1,205	27,444,514
- ժամկետային ավանդներ	-	-	-	7,839,219	5,731,468	11,111,849	2,800,201	150,555	-	27,633,292
- այլ	-	-	711,411	-	25,505	-	-	-	-	736,916
Առևտրային նպատակով պահվող պարտավորություն			10,367							10,367
Ստորադաս փոխառություններ				30,810					4,357,985	4,388,795
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն										-
Վճարվելիք գումարներ			73,874							73,874
Հետաձգված հարկային պարտավորություն										-
Այլ պարտավորություններ	0	-	984,950	739,737	12,052	1,182	-	-	-	1,737,921
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ	0	-	-	197,555	371,156	774,681	1,702,782	60,259	-	3,106,433
Պայմանագրային պարտավորություններ										-
<b>Ընդամենը</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>30,372,144</b>	<b>21,716,870</b>	<b>9,128,753</b>	<b>15,818,938</b>	<b>6,776,767</b>	<b>412,879</b>	<b>1,715</b>	<b>84,228,066</b>
Այդ թվում										
I խմբի արտարժույթով	-	-	12,495,559	7,381,690	7,827,744	11,853,247	3,119,080	1,774,433	-	44,451,753
II խմբի արտարժույթով	-	-	404,999	243,075	46,893	51,422	664	-	-	747,053
«Խոշոր» պարտավորություններ			3,590,866	11,503,392	1,012,695	321,561	1,854,247			18,282,761
Այդ թվում										
Փոփոխվող տոկոսադրույքներով				2,142,219	743,303	114,292	228,585			3,228,399
Ֆիքսված տոկոսադրույքներով	-	-	10,581,960	18,834,914	8,347,893	15,703,464	6,548,182	412,879	1,715	60,431,007
Անտոկոս	-	-	19,790,190	739,737	37,557	1,182	-	-	-	20,568,666
Զուտ իրացվելիության ճեղքվածք	928,378	111,012	(4,544,289)	(663,493)	(3,875,663)	(7,984,089)	20,392,755	5,479,088	636,725	10,480,424
Այդ թվում										
I խմբի արտարժույթով	490,240	53,019	2,217,679	(2,041,039)	(5,112,444)	(7,227,651)	10,769,048	2,245,549	114,978	1,509,379
II խմբի արտարժույթով	-	-	454,100	(99,241)	(46,893)	(51,422)	(664)	-	-	255,880
Փոփոխվող տոկոսադրույքների համար	-	-	-	(2,142,219)	(743,303)	(114,292)	(228,585)	-	-	(3,228,399)
Ֆիքսված տոկոսադրույքների համար	928,378	111,012	(10,021,521)	(238,149)	(3,103,140)	(7,885,139)	20,522,604	5,479,088	(1,715)	5,791,418
Կուտակային իրացվելիության ճեղքվածք	928,378	1,039,390	(3,504,899)	(4,168,392)	(8,044,055)	(16,028,144)	4,364,611	9,843,699	10,480,424	

Նախորդ հաշվետու ժամանակաշրջան

31.12.2014

Հազ դրամ

Հոդվածի անվանումը	Չափատող		Մարմանը մնացել է						Անժամկետ	Ընդամենը
	Ժամկետային	Ժամկետանց	Ցպահանջ	մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 12 ամիս	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի		
Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ										
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	-	-	19,330,019	-	-	-	-	-	1,270,000	20,600,019
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ծուլակտորներ			8,825							8,825
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	0	0	3,106,199	4,721,539	-	9	-	-	330,066	8,157,813
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ			54,263							54,263
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	399,874	29,509		7,889,731	7,108,072	5,712,295	25,055,489	5,899,723	-	52,094,693
Արժեթղթեր, այդ թվում				104,696	-	60,014	2,315,930	3,638,171	276,918	6,395,729
- առևտրային նպատակով պահվող										-
- վաճառքի համար մատչելի			-						276,918	276,918
- մինչև մարման ժամկետը պահվող										-
- ռեպո համաձայնագրով վաճառված			-	104,696	-	60,014	2,315,930	3,638,171	-	6,118,811
Այլ պահանջներ				34,711			-	-		34,711
Պայմանագրային պահանջներ**										-
<b>Ընդամենը</b>	<b>399,874</b>	<b>29,509</b>	<b>22,499,306</b>	<b>12,750,677</b>	<b>7,108,072</b>	<b>5,772,318</b>	<b>27,371,419</b>	<b>9,537,894</b>	<b>1,876,984</b>	<b>87,346,053</b>
Այդ թվում										
I խմբի արտարժույթով	65,226	6,370	11,996,622	5,238,380	4,765,853	2,361,557	10,000,185	3,379,200		37,813,393
II խմբի արտարժույթով	-	-	938,858	400,683	-	-	-	-	-	1,339,541
Այդ թվում										
Փոփոխվող տոկոսադրույքներով										-
Ֆիքսված տոկոսադրույքներով	399,874	29,509	63,099	11,854,760	7,108,072	5,772,318	27,371,419	9,537,894	1,876,984	64,013,929
Անտոկոս	-	-	22,436,207	895,917						23,332,124
<b>Պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ</b>										
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	-	-	7,631,777	3,228,435	1,629,641	4,875,149	4,689,878	255,287	500	22,310,667
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում	-	-	27,800,555	10,386,932	6,692,719	11,481,216	1,014,745	151,513	1,253	57,528,933
- ցպահանջ ավանդներ	-	-	26,574,457	36,876	12,762	2,246	21,055	-	1,253	26,648,649
- ժամկետային ավանդներ	-	-	4,039	10,350,056	6,679,957	9,732,040	993,690	151,513	-	27,911,295
- այլ	-	-	1,222,059			1,746,930				2,968,989
Առևտրային նպատակով պահվող պարտավորություն			19,659							19,659
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն							116,061			116,061
Վճարվելիք գումարներ			52,781							52,781
Հետաձգված հարկային պարտավորություն										-
Այլ պարտավորություններ	-	-	641,651	171,460	636	2,289				816,036
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ	-	-	-	221,670	110,653	2,047,293	1,607,145	75,206	9,499	4,071,466
Պայմանագրային պարտավորություններ										-
<b>Ընդամենը</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>36,146,423</b>	<b>13,786,827</b>	<b>8,322,996</b>	<b>16,474,715</b>	<b>5,704,623</b>	<b>406,800</b>	<b>1,753</b>	<b>80,844,137</b>
Այդ թվում										
I խմբի արտարժույթով	-	-	10,294,267	10,320,998	5,687,137	12,915,449	1,243,472	114,929		40,576,252
II խմբի արտարժույթով	0	0	394,813	80,981	26,616	165,761	2,784	-	-	670,955
«հոշոր» պարտավորություններ			4,649,772	7,284,368	301,105	30,227	2,017,090			14,282,562
Այդ թվում										
Փոփոխվող տոկոսադրույքներով				1,773,711	1,928,705	243,763				3,946,179
Ֆիքսված տոկոսադրույքներով	0	0	12,811,784	11,804,470	6,380,901	14,479,487	5,683,568	406,800	-	51,567,010
Անտոկոս	-	-	23,334,639	208,646	13,390	1,751,465	21,055		1,753	25,330,948
Զուտ իրացվելիության ճեղքվածք	399,874	29,509	(13,647,117)	(1,036,150)	(1,214,924)	(10,702,397)	21,666,796	9,131,094	1,875,231	6,501,916
Այդ թվում										
I խմբի արտարժույթով	65,226	6,370	1,702,355	(5,082,618)	(921,284)	(10,553,892)	8,756,713	3,264,271	-	(2,762,859)
II խմբի արտարժույթով	-	-	544,045	319,702	(26,616)	(165,761)	(2,784)		-	668,586
Փոփոխվող տոկոսադրույքների համար	-	-	-	(1,773,711)	(1,928,705)	(243,763)	-	-	-	(3,946,179)
Ֆիքսված տոկոսադրույքների համար	399,874	29,509	(12,748,685)	50,290	727,171	(8,707,169)	21,687,851	9,131,094	1,876,984	12,446,919
Կուտակային իրացվելիության ճեղքվածք	399,874	429,383	(13,217,734)	(14,253,884)	(15,468,808)	(26,171,205)	(4,504,409)	4,626,685	6,501,916	

**Ծանոթագրություն 33. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»**

Բանկում առկա չեն կապիտալի մակարդակի նկատմամբ սահմանված ներքին պահանջներ: ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից բանկերի համար սահմանված է ռիսկով կշռված ակտիվների նկատմամբ 12 % ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշ: ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 5,000,000 հազ. դրամ գումարով: Բանկը հաշվետու ժամանակաշրջանում կատարել է կապիտալի մակարդակի համար սահմանված նորմատիվային պահանջները:

Ներկայացնում ենք հաշվեկշռային կապիտալի կառուցվածքը.

	Հազ դրամ	
	30.09.2015	31.12.2014
Կանոնադրական կապիտալ	2,333,338	2,333,338
Պահուստներ`	6,058,903	5,665,843
Գլխավոր պահուստ	6,000,000	5,405,133
Վերագնահատման պահուստներ	58,903	260,710
Զբաղիված շահույթ (վնաս)	2,509,919	3,105,129
<b>Ընդամենը կապիտալ</b>	<b>10,902,160</b>	<b>11,104,310</b>

Ներկայացնում ենք ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման համար կիրառվող հիմնական և ընդհանուր կապիտալները կապիտալի համարժեքության ցուցանիշները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում` ըստ ամիսների, համեմատելով այդ ցուցանիշները նորմատիվային պահանջների հետ.

2015թ.	Նորմատիվների հաշվարկին մասնակցող						
	Հիմնական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Ընդհանուր կապիտալ	Վարկային ռիսկ	Շուկայական և գործառն.ռիսկ	համարժեք.Փաստացի %	ՀՀ ԿԲ-ի սահմանաչափ %
	1	2	3 (1+2)	4	5	6	7
Հունվար	8,961,578	315,720	9,277,298	64,010,658	1,100,894	12.68	12
Փետրվար	8,850,801	317,154	9,167,955	63,430,008	1,031,514	12.73	12
Մարտ	8,834,583	566,517	9,401,100	63,851,005	923,726	13.14	12
Ապրիլ	8,861,599	2,881,854	11,743,453	63,430,662	904,915	16.55	12
Մայիս	8,690,543	4,339,342	13,029,885	65,375,536	905,698	17.87	12
Հունիս	8,543,774	4,271,887	12,815,661	66,343,559	1,013,455	17.14	12
Հուլիս	8,465,605	4,232,803	12,698,408	68,799,608	951,992	16.55	12
Օգոստոս	8,491,341	4,245,671	12,737,012	69,726,632	1,036,429	16.25	12
Սեպտեմբեր	8,552,040	4,276,020	12,828,060	70,302,089	1,044,853	16.24	12

2014թ.	Նորմատիվների հաշվարկին մասնակցող						
	Հիմնական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Ընդհանուր կապիտալ	Վարկային ռիսկ	Շուկայական և գործառն.ռիսկ	համարժեք.Փաստացի %	ՀՀ ԿԲ-ի սահմանաչափ %
	1	2	3 (1+2)	4	5	6	7
Հունվար	8,240,862	1,046,908	9,287,770	53,052,950	1,118,598	14.89	12
Փետրվար	7,905,841	983,126	8,888,967	53,826,057	1,103,906	14.10	12
Մարտ	7,834,785	826,813	8,661,598	55,481,270	1,067,818	13.45	12
Ապրիլ	7,965,916	883,500	8,849,416	57,029,273	1,104,906	13.36	12
Մայիս	7,857,777	943,233	8,801,010	56,716,308	1,101,716	13.36	12
Հունիս	7,996,041	935,523	8,931,564	57,068,163	1,114,029	13.46	12
Հուլիս	8,084,207	880,048	8,964,255	59,237,113	1,119,714	13.07	12
Օգոստոս	8,172,644	870,684	9,043,328	60,133,106	1,104,177	13.04	12
Սեպտեմբեր	8,302,696	897,073	9,199,769	60,896,835	1,080,444	13.16	12
Հոկտեմբեր	8,423,559	1,031,867	9,455,426	62,589,111	1,110,873	13.16	12
Նոյեմբեր	8,424,647	1,073,194	9,497,841	64,545,616	1,104,644	12.88	12
Դեկտեմբեր	8,957,704	338,037	9,295,741	65,080,651	1,005,343	12.65	12

Ներկայացնում ենք ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանի վերջի և նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների, անավարտ ժամկետային գործառնությունների ռիսկերի կշիռները՝ ըստ ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատատված Կանոնակարգ 2-ի ռիսկի կշիռների.

Հազ դրամ

30.09.2015թ. դրությամբ				
Ռիսկի կշիռը	Ակտիվներ	Հետհաշվեկշռային պայմանական պարտ.	Անավարտ ժամկետային գործառն.	Ընդամենը վարկային ռիսկ
0%	37,822,531	167,075		-
10%	2,832,739			283,274
20%	1,210,034			242,007
30%	1,893,995			568,199
50%	3,089,004	24		1,544,514
75%	5,976,904	94,736		4,553,730
100%	23,003,401	502,093		23,505,494
110%	308,103	23,451		364,709.40
150%	24,846,537	968,672	6,750	38,732,939
<b>Ընդամենը</b>	<b>100,983,248</b>			<b>69,794,865</b>

Հազ դրամ

31.12.2014թ. դրությամբ				
Ռիսկի կշիռը	Ակտիվներ	Հետհաշվեկշռային պայմանական պարտ.	Անավարտ ժամկետային գործառն.	Ընդամենը վարկային ռիսկ
0%	31,358,342			-
10%	1,580,518			158,052
20%	1,531,625			306,325
30%	1,719,379			515,814
50%	2,309,211	15		1,154,613
75%	8,743,185	149,603		6,669,591
100%	25,902,212	343,793		26,246,005
110%	130,126	33,066		179,511.20
150%	19,043,406	861,537		29,857,415
<b>Ընդամենը</b>	<b>92,318,004</b>	<b>1,388,014</b>		<b>65,087,325</b>

---

**Ծանոթագրություն 34. «Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք»**

Ներկայացնում ենք ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքի վերաբերյալ բացահայտումներ՝ կատարված ՀՀՍՍ 32 «Ֆինանսական գործիքներ, բացահայտումը և ներկայացումը» պահանջների համաձայն.

Ֆինանսական գործիքների իրական արժեքը այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը մարվել իրազեկ և պատրաստական կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորությամբ» գործարքի ընթացքում:

ՀՀ պետական գանձապետական և ՀՀ ԿԲ արժեթղթերի իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշումների հիման վրա:

30.09.15թ. դրությամբ ֆինանսական գործիքի յուրաքանչյուր դասի իրական արժեքի գնահատման ժամանակ Բանկի կողմից օգտագործվել են հետևյալ մեթոդներն ու գնահատումները.

**Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ Կենտրոնական Բանկում .**

Այս կարճաժամկետ գործիքների համար հաշվեկշռային արժեքը ճշգրտորեն արտացոլում է նրանց իրական արժեքը:

**Հաճախորդներին տրված վարկեր ու փոխառություններ, պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ.**

Վարկային պորտֆելի իրական արժեքը կախված է պորտֆելի յուրաքանչյուր դասի շրջանակներում առանձին վարկի վարկային և տոկոսադրույքային առանձնահատկություններից: Վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդի գնահատումը հաշվի է առնում վարկերի տարբեր դասերին բնորոշ ռիսկերը, ինչը հիմնված է այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են տնտեսական այն ճյուղի իրավիճակը, որտեղ գործում է յուրաքանչյուր փոխառում, յուրաքանչյուր փոխառուի տնտեսական իրավիճակը և ձեռք բերված երաշխիքները: Հետևաբար վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդը այն զեղչի ճշգրիտ գնահատականն է, որն արտացոլում է վարկային ռիսկի ազդեցությունը:

**Ներգրաված միջոցներ բանկերից ու այլ ֆինանսական կազմակերպություններից.**

Հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:

**Հաճախորդների ավանդներ և բանկային հաշիվներ.**

Հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:

30.09.15թ. դրությամբ բանկը չունի այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք հաշվառվում են իրական արժեքը գերազանցող գումարով:

**Ծանոթագրություն 35. «Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում»**

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջանում այս ծանոթագրության համար ներկայացվելիք տվյալներ առկա չեն:

**Ծանոթագրություն 36. «Ապաճանաչում»**

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջանում այս ծանոթագրության համար ներկայացվելիք տվյալներ առկա չեն:

**Ծանոթագրություն 37. «Գրավադրված ակտիվներ»**

30.09.15թ. դրությամբ բանկը գրավադրված ակտիվներ չունի



**Ծանոթագրություն 38. «Ընդունված գրավ»**

30.09.15թ. դրությամբ առկա չեն գրավ ընդունված ակտիվներ, որոնք բանկն իրավունք ունի վաճառել կամ նորից գրավադրել հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման, խախտման բացակայության դեպքում:

Ներկայացնում ենք բանկի կողմից գրավ ընդունված ակտիվները և երաշխավորությունները իրենց համապատասխան վարկային ներդրումների հետ, առանց հաշվի առնելու պահուստի գումարները.

Հազ դրամ

Գրավի տեսակ	30.09.2015		31.12.2014	
	Վարկի գումար	Գրավի գումար	Վարկի գումար	Գրավի գումար
Անշարժ գույք	22,967,023	108,004,100	21,856,511	88,874,550
Ավտոմեքենա	4,041,874	14,729,725	4,808,107	14,707,935
Սարքավորում	138,398	570,850	153,205	356,433
Պատրաստի արտադրանք	496,885	1,139,045	540,929	1,108,045
Երաշխավորություն	16,828,736	74,541,862	13,853,270	55,923,304
Դրամական միջոցներ	720,272	1,658,876	707,627	1,029,181
Ոսկյա իրեր	5,754,955	7,248,228	5,665,566	6,379,519
Ստանդարտ ոսկի	4,500	9,018	28,701	38,741
Պետ. արժեթղթեր				
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր	-	-	-	-
Այլ արժեթղթեր	-	-	-	-
Այլ գրավ	9,328	45,682	3,081	12,988
Գրավ առկա չէ	4,398,649		5,176,950	
<b>Ընդամենը</b>	<b>55,360,620</b>	<b>207,947,386</b>	<b>52,793,947</b>	<b>168,430,696</b>

**Ծանոթագրություն 39 «Պարտավորությունների չկատարում/խախտում»**

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջանում այս ծանոթագրության համար ներկայացվելիք տվյալներ առկա

Բանկի վարչության նախագահ

Ա. Նալջյան

Գլխավոր հաշվապահ

Դ.Ազատյան

Վավերացման ամսաթիվը 20 Հոկտեմբեր 2015թ.